

դուրս* 29764 հ.): եթէ ի նկատի առնենք, որ 1886-ից մինչև 1900 թիւը տարեկան մօտաւորապէս $1\frac{1}{2}\%$ բազմանալով 939456ը կարող էր դառնալ $1900\text{-ին } 939456 + 225000 = 1164456$, կտեսնենք, որ տեղեկագրում հայերի թիւը կովկասում համեմատաբար աւելի քիչ է ցոյց տրուած: Կովկասից դուրս, Ռուսաստանում, Բեսարարիայի թեմում, նոյնպէս տեսանք, որ ծխականների թիւը պակաս է ցոյց տրուած, ուստի և ամբողջ Ռուսաստանում հայ ծխականների 1131474 թիւը ըստ մեզ իրականութիւնից շատ հեռու է: Ինչպէս տեսնք Ռուսաստանում մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 853 ծխի, մի քահանային 731 ծխական, մեր կարծիքով սոյն թուերն էլ մօտաւորապէս համապատասխանում են իրականութեան: Սակայն, կասկած չկայ, որ կարծիքներով անհնար է թուեր ստուգել, ուստի և խնդրում ենք այն անձանց, որոնք հնարաւորութիւն ունին աւելի ստոյգ աղբիւրներից որեւիցէ տեղեկութիւն տալու սոյն հետաքրքիր նիւթի մասին, չզլանան ասպարէզ դուրս գալ:

Միսիրաւ Վարդապետ



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՒՄԻՆ

(Փ. Վ. Յարրար)

ԳԼՈՒԽ Ա.

Ագրիպպինայի իղձերն ու խորհուրդները

*Oramus, cae despuas, ocelle,
Ne poenas Nemesis reposcat a te:
Est vehemens Dea; laedere hanc caveto* *)
Catull. Carm. L, 18—20

Հռոմէական կեսարների պաշտօնը մի չափազանց ընդարձակ և հոյակապ շննութիւն էր, որ կայսերներին իշխանութեան

* Խնդրում եմք քեզ վախեցիր քարեկամ,
որ լսայ քեզ իւր պատիժը նեմեզիդան.
քարկացող է աստուածուհին. զգուշացիր վիրաւորել նրան:

զօրեղանալու հետ միասին հետզհետէ ընդլայնանում էր: Հանգիստաւոր մուտքը բացւում էր Ապոլլոնեան փողոցի վրայ, որ տանում էր դէպի մայրաքաղաքի գլխաւոր Նուիրական փողոցը: * Այդ մուտքը 29 ոտնաչափ բարձրութիւն ունեցող մի հոյակապ կամար էր զարդարուած Ապոլլոնի և Դիանայի քառաձի կառքով արշաւող արձաններով, որոնք Լիսիոսի ձեռակերտն էին: Անցնելով Նախագոռնից (պրոպիլէ) այցելուն մտնում էր Նուիրական հրապարակը, որ սալայատակուած էր սպիտակ մարմարիոնով և շրջապատուած 52 կոփածու սիւներով, որոնք շինուած էին նումիդիական քնքոյշ, վարդադոյն և սոկեշող մարմարիոնից: Նրանց մէջ կանգնած էին Դանահուիւնների արձաններն և նոյն շարքում նրանց հայրը Դանաւոս՝ մերկ սրով: Նրանց առաջ՝ քաց տարածութեան վերայ կանգնած էին նրանց չարադէտ եղիպտացի ամուսինների արձանները, իւրաքանչիւրը նրստած իւր սէզ ձիու վերայ: Ի շարք այլ զեղարուեստական թանգադին ձեռակերտների այնտեղ կանգնած էր նաև Լիսիպպոսի նշանաւոր Հերիուլէսը յենուած բրի վրայ և հագած իւր սպանած առիւծի մորթին: Մի կողմում դանւում էր Ապոլլոնի տաճարը, որ շինուած էր լիւնիական մարմարիոնից Վուպալի և Անթերմէս Քրոտացու յատակագծով: Տաճարի ճակատը զարդարում էր Ապոլլոնի սոկէզօժ բրոնզեայ կառքը, իսկ փղոսկրեայ հարթաքանդակով բրոնզեայ երկիւղի դռները պատկերացնում էին Նիդրայի պարտութիւնը և Գալլերի սրտապատառ փախուստը Դելֆից: Տաճարի ետևում դանւում էր Վեստայի մհհեանը, իսկ հարաւային կողմում նշանաւոր պալատիկեան մատենադարանը, որ իւր ընդարձակութեամբ կարող էր տեղաւորել ամբողջ ծերակոյտն և ունէր երկու բաժին—Յունական և Լատինական: Նրա անդամատակում (վեստիբուլ) կար 50 ոտնաչափ բարձրութեամբ Օգոստոսի բրոնզեայ արձանը՝ ներկայացուած Ապոլլոնի առանձնաւորութիւններով (ատրիբուտ):

Օգոստոսի պալատն և Նախագոռն իրանց քաց տարածութիւններով, ծաղկանոցներով և աղբիւրներով կպած էին մի այլ առանձին պալատի, որ կոչւում էր Տիբերիոսի Տուն ** և գրա-

* Օգոստոսի ժամանակից Հռոմը քաժանւում էր 14 regiones, կամ մաս: որոնք իրանց ներքում ստորաքաժանւում էին քաղերի կամ vicus-ների: Vicus էին ասում նաեւ կարճ, փոքր և խոստրնակ փողոցներին, որոնցից մինն էր Vicus Apollonis. Via Sacra-ն կայսերական մայրաքաղաքի գլխաւոր և ամենաքաղմակարդ փողոցն էր:

** Domus Tiberiana.

նւում էր Վելաբրումի վրայ: * Իսկ Գայիոսը, որ աւելի յայտնի է Վալիգուլա մականունով, նոր շինութիւններով լցրեց պալատի և ֆորումի մէջ եղած ամբողջ տարածութիւնը: Նա նոյնպէս գնեց Գելտտիոսի տունն և այն համեստ ընակարանում սիրում էր գիշերներ անցկացնել աղմկալից օրգիանների մէջ իւր սիրելի կանաչ կուսակցութեան պատկանող ձիապանների և կառապանների հետ միասին: Նրա ժամանակից այդ ընակարանը սովորաբար ուսումնարանի տեղ էր բռնում կայսերական մանկաւիղների դաստիարակութեան համար, որոնց երբեմն լուրջ, իսկ ըստ մեծի մասին զուարճալի և երգիծաբանական, երեխայական մակադուրթիւնները կարելի է տեսնել նոյն իսկ և այժմ կիսակործան պատերի վրայ: Որչափ էլ որ ընդարձակ էր այս բարդ շինութիւնը, այնուամենայնիւ ներոնը, Գոմետիանոսը և հետեւեալ կայսերներն իրանց անսպառ քմահաճութեամբ աւելի ևս մեծացրին նորանոր յաւելուածներով: Սակայն եթէ պալատն իւր հոյադապութեամբ գերազանցում էր կայսերական Հռոմի բոլոր այլ շինութիւններից, միևնոյն ժամանակ գերազանցում էր նրանցից եւ իւր պատերի մէջ կատարուող աղէտներով և ոճրագործութիւններով: Այնտեղ Օգոստոսի ժամանակ Լիւիա կայսերուհին միտք յղացաւ սպաննել և հեռացնել այն ամեն անձանց, որոնք կանգնած էին իւր որդու գահ բարձրանալու ճանապարհի վրայ: Տիրերիոսի թագաւորութեան ժամանակ պատերը վկայ եղան Նլիոս Սէյանոսի զարհուրելի բանտարկութիւններին: 23 թուին այս յանդուգն և անգութ բանտարկուն կարողացաւ թունաւորել Տիրերիոսի միակ Դրուսոս որդուն, կանխօրէն հրապուրելով նրա անհաւատարիմ Լիւիա կնոջը: Այնտեղ 33 թուին հերոսական Գերմանիկոսի որդին, Դրուսոս կրքոտերը, դանդաղընթաց սովամահութեան ենթարկուեց Տիրերիոսի հրամանով: Պալատի նիւղները մինում՝ հարկւրապետի կռաւիհ հայհոյանքներից և ուղղանալով անմտաբար պարսաւում էր բռնակալին և ծեծ ուտում բանտապահ յանդուգն ստրուկներից: Ինն օր տանջւում էր զարհուրելի քաղցից և խելացնոր տաղնալի մէջ որոճում այն խոտից, որով լցուած էր անկողինը: Այն տեղ երիտասարդ Տիրերիոս Գեմելլոսը, Տիրերիոսի թոռը, ցոյց տալով անձնասպանութիւն գործելու ողորմելի անընդունակութիւնը՝ իւր հօրեղբօր որդի և եղբայրացու Վալիգուլայի կողմից յատկապէս ուղարկուած տրիբունից սովորեցաւ թէ ինչպէս պէտք է սուրն իւր կոկորդը խրել: Այն անագին շինութեան բո-

* Velabrum—անհետական հրապարակը Հռոմում:

լոր սենեակները յաջորդաբար վկայ էին եղել սոյն անմիա-
կայսեր վայրենի և զարհուրելի քմահաճոյքին և այն տանջանքնե-
րին, որոնց ենթարկուած էր նա աղնուաւաններին և սենատոր-
ներին հրամայելով նրանց խցել իրանց բերանը հէնց իրանց սեպ-
հական արիւնաթաթաւ հանդերձները, Ինքն էլ իւր յանցանքների
համար հէնց այստեղ, իր շինած պալատը թատրոնի հետ միաց-
նող փակ սրահի մէջ, սպանուեց տրիբուն Վասիոս Քերէայի մո-
լեզին սրից՝ ենթարկուելով վրիժառութեան: Նոյն տեղում ըն-
կաւ անմիջապէս (դեռ չէին անհետացել պատի վրայից արեան
բծերը) նրա կապոյտաչեայ Աետոնիա կայսերուհին կոկորդուած
ստացած սրի հարուածից՝ երբ հեծեծուած էր և ողբում իւր տի-
րոջ դիակի վրայ, նրա փոքրիկ աղջկան Յուլիա Գրուսիլլային
նոյնպէս ջախջախեցին մինչ ի մահ քարերի վրայ:

Ահա թէ ինչ էր հեթանոս Հռոմի պալատը քրիստոնէու-
թեան արշալուռին: Մինչև անգամ՝ հին աստուածների ամենա-
կարծրացած երկրպագուներին էլ կարող էր թուել, որ այդ պա-
լատում ընակում էր չարութեան ոգին, որ այնտեղ թափա-
ռում են վրէժ չլուծած մեռեալների ուրուականները, որ նրա
միջանցքներում խաւար կէս գիշերին անխելի քայլերով սահում
են միւս աշխարհից եկած ստուերներ և որ նրա մութ անկիւն-
ներից որեիցէ մի տեղում միայնակ անցնողը կարող էր ընդհար-
ուել այն ուրուականներից մինին, որոնք Վալիս էին արիւնակից
արտասուքով, և խոր ոգւոց հանելով հեռանում անմեղների
մօտեցած ժամանակ:

Սակայն սոյնպիսի ահեղ զգացմունքներից և ոչ մէկը չէր
վրդովում Ագրիպպինա կայսերուհու միտքը, երբ նա 54 թուին
Սեպտեմբերի մի երեկոյ հանգիստ նոտած էր այդ պալատում:
Ամբողջ աշխարհ նրա ոտների ներքոյ էր: Քաջայտղթ և բարի
հայրը Գերմանիկոս և ողջախոհ, առաքինի մայրը՝ Ագրիպպինա
աւագն աստուածացման առարկայ էին հռոմէական զօրքի և ժո-
ղովրդեան համար, նա Օգոստոս կայսեր ծոռն էր, յաղթող Ագրիպ-
պինայի թոռը, Տիբերիոս կայսեր հետ հօրեղբոր թոռներ, Գայի-
ոսի քոյրը և վերջապէս այժմ իւր անխոնջ բանտարկութիւնների
շնորհիւ դարձել էր իւր հօրեղբոր Ալաւդիոս կայսեր վեցերորդ
կինը: Բաւական չհամարելով այդպիսի մօտաւոր կապերն այն
բաղմաթիւ անձանց հետ, որոնք երկրի վերայ իբրեւ աստուած-
ներ էին պաշտուել, այժմ մտածում էր թէ ինչո՞ւ արդեօք իւր
թանկագին ներոն որդին վաղ թէ անաղան չպէտք է բարձրա-
նայ կեսարների դահի վրայ, որպէս զի ինքը Նքա անունով եր-
կար ժամանակ աշխարհը կառավարէ, ինչպէս որ այժմ կառա-
վարում էր իւր ամուսնու, Ալաւդիոսի անունով: Նրա մեծ

տաւոր Լիւիան, Օգոստոսի մեծաշուք կինը, երեւմն՝ թէև իւր ամուսնու մահից յետոյ, ստացել էր «Օգոստափառուհի» անունը,* իսկ Ագրիպպինան ստացաւ այդ տիտղոսն և նրա հետ այն ամեն պատիւները, ինչ որ կարող էր հնարել ծառայական ծերակոյտը, դեռ իւր երիտասարդութեան փթթող հասակում: 25^օ որ նա այժմ չտեսնուած շքով շրջապատուած բաղմում էր գահի վերայ իւր թոյլ և վաղաժամ ծերացած ամուսնու կողքին օտարերկրեայ դեսպանների ընդունելութեան ժամանակ: 25^օ որ Հռոմի արքայադուստրներից միայն նա ունէր արտօնութիւն կառքով Վապիտուլիա մտնելու: 26^օ որ նրա գեղեցիկ գլուխը ու սիրունատես դէմքը դրոշմուած էին հազարաւոր դրամների և շքադրամների վրայ: 27^օ որ նա արդէն ապացուցել էր, որ իւր նախորդ գեղեցիկ բայց լքուած Միսալինայի հակառակ ինքն ինչպիսի արժանաւորութիւնով կարող էր կառավարել գահի վրայից աշխարհը:

Այն, աշխարհը նրա ոտների ներքոյ էր և նա ամեն մի հայեացքով ու շարժուածքով դիտակցօրէն արտայայտում էր, որ ինքն այնպիսի մեծութեան տէր է, որին մինչև այդ ժամանակ կանանցից դեռ ոչ ոք չէր հասել: Ունէր գործակալների և լրտեսների անթիւ բաղմութիւն: Պալատը նրա կողմն էր. որովհետև Վլաւդիոսի ժամանակ պալատ ասելով հասկանում էին ամենազօր աղատագիրները, որոնք անամօթաբար ղեկավարում էին իրանց թոյլ տէրերին և կողոպտում նրանց: Եւ եթէ նա մինչև այժմ հնարաւորութիւն չէր ունեցել դրդուելու կայսերական ատենադպիր Նարկիսի անսասան ազնուութիւնը, դրա փոխարէն նրա տրամադրութեան ներքոյ էր առաւել ևս հզօր Պալլանտը: Ժողովուրդը նրա կողմն էր. որովհետև միակ ժառանգն էր այն կայսերազնի, որին ժողովուրդը սիրում էր արտակարգ սիրով: Հռոմի ամենախելօք մարդը՝ Սենեկան նոյնպէս նրան կողմնակից էր. որովհետև միշտ նրա սիրելիների թւում համարուելով իրաւունք ստացաւ վերադառնալու աքսորից, տենդային Վորսիքայից՝ յատկապէս նրա ազդեցութեամբ և ստանձնելով նրա որդու դաստիարակի բարձր պաշտօնը՝ նուիրուած էր նրա գործին: Նրա կողմն էր պրետորական դունդը. որովհետև Բուլբրոսը, պրետորեանների քաջ և ազնիւ պետը, իւր պաշտօնը նրա միջնորդութեամբ էր ստացել: Նրա ձեռքն էր ոսկու ոյժը. որովհետև ի նշան անսահման յափշտակողութեան՝ արկղները լիութի էին գանձով: Մեծ ոյժ ունէր հրապուրելու, որովհետև շատ սա-

* Augusta, որ համապատասխանում է Augustus արական սփղոսիմ:

կաւներն էին կարողանում զիմադրել նրա հմայքին, երբ ցանկանում էր գրաւել նրանցից մինին իւր ցանցերի մէջ: Ամենից դուրսաւորը նա լիակատար վստահութիւն կարող էր ունենալ ինքն իւր անձի վերայ: Աներկիւղ էր մօրը, Ագրիպպինա աւագի, նման: Ժողովրդական հօրը, աստուածացած Գերմանիկոսի նման, պայծառափայլ և համարձակ որպէս իւր տատը՝ Յուլիան, Օգոստոսի անբախտ դուստրը, լի այրական եռանդով և գործի ընդունակութիւնով՝ որպէս իւր պապը՝ Ագրիպպան: Էլ ո՞վ կարող էր պարծենալ այսպիսի ձիրքերով և կամ արամադրութեան ներքոյ ունենալ այսպիսի միջոցներ: Սակայն նա տակաւին մինչ ի յատակ չէր քամել փառասիրութեան բաժակը, որ արդէն շատ վաղուց մատուցել էր անկշտում երախին:

Նա նստած էր իւր շքեղ սենեակում ցածր, լայնաթիկունք դահաւորակի վրայ, որ ճոխութեամբ զարդարուած էր ոսկւով և փղոսկրով: Սենեակը լի էր ամենայն տեսակ գեղարուեստական զարդերով և աշնանային արևի ճառագայթներ անցնելով ջերմ բուրմունքալից օդի միջով սահում էին ոսկի և արծաթեայ փոքրիկ արձանների, գեղեցկաշէն մարմարիոնեայ հարթաքանդակների և պատերի վրայով, որոնց վերայ երևում էին խայտաճամուկ սիրամարգներ, թեւաւոր ողիներ և ցնորական արարեսքներ: Նրա դէմքը հոգու հայելին էր և պարզ ցոյց էր տալիս որ նա մի կին է, որ ստոր կրճերը ծառայեցնում է որպէս միջոց բարձր փառասիրութեան յազուարդ տալու համար: Ավ որ տեսնէր նրան այդ գրութեամբ, ընկողմանած դահաւորակի վրայ, իսկոյն կրմբունէր, որ իւր առաջ գտնւում է մի այնպիսի կին, որ ծնուած է կառավարելու համար և որի երակների մէջ հոսում է հռոմէական ամենահին տոհմերի ազնուագոյն արիւն: Յի տարեկան էր, սակայն գտնւում էր տակաւին իւր յափշտակիչ գեղեցկութեան գագաթնակէտին և կերպարանքն, ամենեւին չէր կորցրել իւր մատաղ ձևերի գողտրիկութիւնն ու վայելչակազմութիւնը: Դիմագծերը մանր և քնքոյշ էին, ճակատը բարեձև, իսկ մեղոյշ կապոյտ աչքերը պայծառ փայլում էին գեղեցիկ թառած յօնքերի տակից: Քիթը սակաւ ինչ արծուային էր, բերանը փոքր, գեղեցիկ և վարդագոյն շրթունքներով, որոնցից վերինը փոքր ինչ դէպի առաջ շարժուած լինելով՝ դէմքին տալիս էր եռանդոտ և վճռական արտայայտութիւն: Ալէճածան մազերը բազմաթիւ փոքրիկ խոպոպներով թափուում էին ճակատի և այտերի վրայ, իսկ ետևի կողմից հաւաքուած էին ոսկի ցանցի մէջ, որից մարդարիտով և շափիւղայով զարդարուած մի հիւսիճնում էր պարանոցի վրայ, որ կիսով չափ ծածկւում էր այդ փափուկ և փարթամ հիւսով: Նա նստած էր խորին մտածմունքի մէջ ընկղ-

մուած. սակայն ուշադրութիւնը դադարեալ չէր իւր գեղեցիկ կերպարանքով, որ արտափայլում էր նրա առաջ պատից կախուած արծաթեայ մեծ և պայծառ հայելին, Դէմքը հէնց այն արտայայտութիւնն ունէր, որով աչքի է ընկնում նրա անդրին կապիտոլիայում—անհանգստութեան և սպառնողութեան արտայայտութիւն: Սանդալ հագած ոտներից մինը թեթև կերպով տարածուած էր միւսի վրայ, իսկ թոյլ կերպով միմեանց միացած գեղեցիկ ձեռները դրուած էին ծնկների վրայ: Հագած էր երկար սոսի, որ հագնում էին սոփորաբար օգնուազարմ մատրոնները: Այդ զգեստի քղանցքը հասնում էր մինչև գետին, իսկ թւերը միայն մինչև արմուկ, ուր ամրացրած էին թանկագին եղունգնեայ քորոյներով, այնպէս որ նրա գեղեցիկ բազուկների մնացած մասը մնում էր բոլորովին մերկ: Ականջներից կախուած էին երկու մեծ մարդարիտ. բացի դրանցից այլ որևէ զարդ չուներ: Աղջկն դրուած փոքրիկ մարմարեոնեայ սեղանի վրայ գտնուում էին նրա թանդագին մատանիները, սքանչելի սուտակներով զարդարուած ապարանջանները. նոյնպէս mure-nula-ն, (փափուկ ոտուց շինած և թանդագին) փայլուն քարերով զարդարուած մանեակ) որ կրում էր խնջոյքի ժամանակ, որից հէնց նոր էր վերադարձել:

Արտաքինին նայելով նա բոլորովին հանդիստ էր, բայց հանգըստութիւն չկար կրճքում, որ անհաւասար բարձրանում էր և ցածրանում նայելով տրամադրութեան. նոյնպէս և հանգստութիւն չկար դէմքի վրայ, որ արտայայտում էր դողող և անոտան վճռականութիւն: Նա միայնակ էր. սակայն յաճախ և անհամբեր հայեացքները ցոյց էին տալիս, որ որևիցէ մէկին սպասում է: Ստրուկներին արձակելով բոլորանուէր անձնատուր եղաւ իրան խորը զբաղեցնող ծրագրին, որի համար ապրում էր նա այդ բոպէին և որն իրականացնելու համար՝ ինչպէս համոզուած էր, պատրաստ էր մեռնելու: Այդ ծրագիրը կայանում էր նրանում, որ իւր ներոնին առաջին յարմար դէպքում բարձրացնէ գահի վրայ, որի աստիճանները լպրծուն էին նրանց վրայ թափուած արեան պատճառով: Չդաւելով այդ նպատակին հասնելու՝ նա այժմ ամենեւին չէր վրդովւում այն հարցով թէ այդ սրչափ արդարացի է, կամ անիրաւ: Յանցանքն երբեք սոսկալի չէր այդ գեղեցիկ կնոջ համար: Արդէն վաղուց վճռել էր, որ ոչ խղճի խայթոցն և ոչ վտանգները կարող են յետ կանգնեցնել նրան այդ բարձրամիտ ձգտումից: Նրա համար, ինչպէս և հոռմէական կայսերութեան բարձր դատակարգի կանանց մեծամասնութեան համար, յանցանքն ոչինչ սարսափելի բան չունէր իւր մէջ և առաքինութիւնը լոկ դատարի խօսք էր: Փիլիսոփա-

ները, ինչպէս, հարկաւ նա դիտէր, խօսում էին առաքինութեան մասին: Մինչև անգամ կարելի է ասել անհետաքրքիր չէր լսել թէ ինչպէս Սենեկան դատողութիւն էր տալիս առաքինութեան մասին, երբ երբեմն պատահում էր նրան ականջ դնել փիլիսոփայի դասերին, որ տալիս էր ներոնին. որովհետև այդ ժամանակ Ագրիպպինան սովորաբար նոտում էր հարեան սենեակում, որ բաժանուած էր միայն ասեղնագործ վարադոյրով: Սակայն վաղուց համոզուել էր, որ այդ ամէնը միայն դեղեցիկ խօսակցութիւն էր և աւելի ոչինչ: Քրմերը յայտարարում էին, որ իրանք երկրպագում են աստուածներին. սակայն ինչ են աստուածները: Միթէ ծերակոյտն աստուած չհրատարակէ՞ց նրա նախահօրը՝ Օգոստոսին, նոյնպէս Տիբերիոսին, անմիտ եղբօրը՝ Վալիդուլային և սրա սպանուած փոքրիկ մանկան, Աեսոնիայի գոտերը, որը այնպէս զուարճացնում էր հօրը ճանկաւելու հաւամէտութեամբ: Եթէ միայն այդպիսինէն են աստուածները, որոնց ի պատիւ այլուում էր խունկն և ծխում զոհարանները, այն դէպքում իհարկէ նա առանձին հարկաւորութիւն չունէր ինքն իրան անհանգստացնելու Ոլիմպոսի բնակիչների համար:

Գուցէ միայն Նեմեդիդան կայ: Սակայն արդեօք գոյութիւն ունի մի այնպիսի բան, ինչպիսին է Նեմեդիդան, Տեսնէ՞լ էր արդեօք որեւիցէ մէկը, որ երբեւիցէ սարսափելի ուրուականն իւր ծանր քայլերով հետևէր յանցաւոր մարդկանց և նրանց վրայ ձգելով իւր մռայլ ստուերը՝ կամաց կամաց հասնէր, դնէր իւր ծանր ձեռքը նրանց ուսերի վրայ, բռնէր նրանց, դէմքերին նայէր և միէր նրանց գլխի մէջ այն ազամանդեայ դամբ, որի վերքը մահացու էր: Մի քանի ըոպէ նրա դէմքը մռայլուեց. սակայն արհամարհական ժպիտով իսկոյն հեռու վանեց իրանից մռայլ մաքերը, ճշմարիտ է, որ նրա տոհմի արիւննալից տարեգրութիւնների մէջ բաւականաչափ ազդեանք կային և այդ ազդեանքը, որչափ տոհմի կարողութիւնն և հարստութիւնը բարձր էր կանգնած լինում՝ նոյնչափ աւելի զարհուրելի էին լինում: Նա մտաւոր ակնարկ ձգեց իւր մերձաւոր ազդականների պատմութեան վրայ: Յիշեց Տիբերիոսի թագաւորութիւնը, երբ մարդիկ հազիւ էին համարձակում փախոցից աւելի բարձր խօսել և երբ ականաւոր մարդկանց աներում սպանութիւնը սովորական բան ու գործ էր դարձել: Նրա հօրեղբայրները, Գայիոս և Լուկիոս Աեսարները, մեռան ծաղիկ հասակում: Արդեօք Սէյանոսը չթունաւորեց նրանց: Միւս հօրեղբայրը, Երիտասարդ Ագրիպպա Պոստումը, որ ծնուած էր հօրը մահուանից յետոյ, սպանուեց անյոյս կռուելիս այն հարիւրապետի հետ, որին ուղարկել էր Լիւիան մենաւոր աքսորաւայրում նրան սպաննելու նպատակով: Մայրն ան-

սիրտ կերպով սպանուեց: Մօրաքոյրը, Յուլիա կրտսերը, մեռաւ նախատինքի և աքսորի մէջ մի ողորմելի կղզու վրայ: Երկու եղբայրը, Ներոնն և Դրուսոսը, թշուառ կերպով ոչնչացան ծաղիկ հասակում: Երրորդ եղբայրը, Վալիգուլա կայսրը, սպանուեց դաւադիրներին: Երկու Յուլիաները, քոյրն և հօրեղբոր դուստրը, զոհ գնացին Մենալինա կայսերուհու մոլեգին խանդոտութեան: Նրա Դրուսիլա քրոջ անունն արդէն արատաւորուած էր հազարաւոր յանցանքներով: Նա մնացել էր միակ տոհմական ներկայացուցիչը վեց իշխանների և իշխանուհիների, որոնցից ամէնքն էլ՝ չնայելով բախտի բոլորանուէր քարեհաճութեան դէպի նրանց, ամենածաղիկ հասակում փչացան բռնի և նախատական մահով, Նա ինքն էլ աքսորուեց եղբորից Պոնտիա կղզին և իւր ճանապարհորդութեան ժամանակ ստիպուած էր կրել կրծքի վրայ եղբոր աներծագի՝ Լիպիդոսի՝ սափորի մէջ ամփոփուած աճիւնը, որի հետ, ինչպէս և այլոց հետ, մեղադրում էին նրան ամօթաբեր յարաբերութիւն ունենալու մէջ: Արդէն երկու անգամ այրիացել էր և դուրսը խօսում էին, որ թունաւորել է երկրորդ ամուսնուն, Արիսպոս Պաոլէնին, Սակայն նրա ինչ վէճն էր, թէ՛ դրսում ինչ են խօսում: Դիցուք մինչև անգամ հէնց թունաւորել է այդ ծերունի և հարուստ հռետորին, ինչ կլինի դրանով: Նրա հարստութիւնը շատ հարկաւոր է և կլինի իւր համար: Այն ժամանակից բախտը ժպտում է նրան: Վերադարձաւ իւր սոսկալի աքսորավայրից: Նրա հոգին երկաթի պէս կարծրացել էր աղէտների հնոցում, սակայն նեղութեան օրերը վերջացել էին: Յարմար ժամանակին հանդիսաւոր մուտք գործեց իւր հօրեղբոր Վլադիկոսի պալատը՝ մինչև որ նրա հետ ամուսնացաւ և իւր ականաւոր գեղեցկութեամբ և յաղթական բանասարկութիւններով հեռացրեց իւր ճանապարհի վրայից բոլոր ակոյցեաններին:

Յիշում էր այդ ախոյեան կանանցից մի քանիսին և նրանց մասին մտածելիս չար ժպիտը փայլում էր գեղեցիկ դիմագծերի վրայ: Նրա նախօրդը՝ Մեսալինան—միթէ, ըստ երևոյթին, ամեն բան նրա կողմը չէր: Վլադիկոսը սիրում էր նրան անմտութեան հասնող սիրով: Մեսալինիան տխմարացրել էր նրան մինչ ի կուրութիւն: Նրան երկու գեղեցիկ որդի էր պարգևել, որոնց սիրում էր նա: Եւ ո՞վ արդեօք կարող էր չսիրել ամօթխածիկ, բայց ազնիւ Բրիտանիկոսին, քնքոյշ և պարզասիրտ Ոկտաւիային: Մեսալինան անկասկած հաւատացած էր, որ յատկապէս իւր որդին կժառանգէ հօրը: Բայց ինչպէս վատ տարաւ իւր գործերը: Ինչպէս յիմարաբար գերադասեց վայելքները փառասիրութիւնից: Ինչպէս հեշտութեամբ յաջողուեց Ագրիպպինային՝ առանց աղէտի

մէջ բացարձակ մասնակցելու՝ գլուխ բերել Մետալինայի ինքն իրան հործանումն անամօթութիւնից և նրա ամենամեծ նախատինջով սպանումը դահճի ձեռքով դեռևս համարեա փոքրիկ աղջկայ հառակում: Իսկ Լոլլիա Պալլինան: Սրա ահագին հարստութիւնով ինչեր չէր անի ինքը: Ազրիպպինան յիշեց՝ թէ ինչպէս մի անգամ հանդիպեցաւ նրան. նոյն իսկ ոչ թէ պալատական մեծ ժողովներից մինում, այլ մի հասարակ պոսակի ընթրիքի ժամանակ՝ երբ եկել էր նա մարգարիտներով և զմրուխտներով գլխից մինչև ոտք շարէ շար զարդարուած հանդերձներով, սքանչելի զմրուխտներ մազերի վրայ և մատներին, պարանոցն անցկացրած մի զմրուխտեայ ամենագեղեցիկ մանեակ, որպիսին երբ և իցէ տեսել էին Հռոմում: Բայց այսուամենայնիւ այդ նրա ամենալաւ զգեստը չէր. իսկ նրա ագամանդները, ինչպէս ասում են, արժում էին ութսուն միլիոն սեստերց, նա յիշեց թէ ինչպիսի նազաշուք փայլերով, ինչպիսի հպարտ գէմքով այդ ամենահարուստ ժառանգը որ ժամանակաւորապէս որպէս Վալլիգուլայի կին կայսերուհի էր դարձել, անց էր կենում իւր փարթամութեամբ հուրացածների շարքերի միջից, զգեստների վրայ կրելով մի ամբողջ գաւառի հասոյթ: Եւ իհարկէ նա լիակատար իրաւունք ունէր Ազրիպպինայի ակոյեանն և Վլադիոսի կինը լինելու յաւակնութեան: Սակաւ հնարագիտութիւն պէտք չէր Հռոմայեցիների մէջ խորն արմատացած այն հակակրօնութեան յաղթելու համար, որ հակառակ էր հօրեղբոր ամուսնութեան եղբոր դստեր հետ, բայց այսուամենայնիւ Ազրիպպինան Պալլանտի և այլոց շնորհիւ նպատակին հասաւ: Նա գլուխ բերեց Լոլլիայի աքսորն և դրանից յետոյ շուտով տրիբունի ձեռքով հրաման ուղարկուեց նրան, որ անձնասպանութիւն գործէ: Ազրիպպինայի երեսը մի քաջ մռայլուեց յիշելով այն երեկոն, երբ վերադարձաւ տրիբունը և հանեց զամբիւղի միջից նրա վրէժի լուծման զարհուրելի ապացոյցը: Ինչ նմանութիւն կար այդ սոսկալի առարկայի և այն գլխի մէջ, որի սեւաթոյր խոպոպիները փայլում էին թանգագին զմրուխտեայ զարդերից: Իսկ Գոմեաիա Լեպիդան, իւր տալը, Մետալինա կայսերուհու մայրը, ներոն որդուն հօրաքայրը իւր ամուսնու՝ Սիսպոս Պասիէնի՝ առաջին կինը: Սա նոյնչափ հարուստ էր, որչափ և ինքն Ազրիպպինան, նոյնչափ գեղեցիկ, ազնուազարմ բայց անամօթ: Վարդ էր ամենազօրեղ դաշնակից լինել. սակայն ինչպէս էր համարձակում ներոնի քարեհամութիւնը գրաւել: Ինչպէս էր համարձակում երես տալ ներոնին, երբ ինքն Ազրիպպինան խիստ էր վարւում նրա հետ: Երբ ինքը գտնւում էր աքսորում և ամուսինն արդէն մեռած էր, որդին դաստիարակւում էր նրա

տանք: Ներսիսի շանսերն այն ժամանակ չափազանց չնչին էին և Լեպիդան այնպէս անամօթաբար բանի տեղ չէր դնում նրան, որ նրա միակ դատաւարակներն էին մի վարսաւիր և մի կաքաւիչ: Իսկ այժմ, երբ նա բռնել էր Հռոմի երիտասարդութեան իշխանի փայլուն դիրքը, այժմ, երբ նա հաղնում էր այրական տոգրաւ, այն ինչ Բրիտանիկոսը մնում էր համեստ աղայի եղբւր-ները ժապաւինով պատած հասարակ հագուստով * և վզին ոսկեայ բուլլայով ** չար աչքից պահելու համար, այժմ, երբ ամենի համար հաւանական էր դառնում, որ Ներսիսը, Վլաւդի-ոսի որդեգիրը, ապագայում կայսր կլինի նրա հարազատ որդու, Բրիտանիկոսի փոխանակ—այժմ, ի հարկէ Գոմեդիան ըստ ամենայնի հաշիւ ունէր որոնելու նրա բարեհայեցողութիւնն և քրծ-նելու նրա առաջ: Լեպիդայի գլուխը կորցնել հեշտ բան չէր, որովհետեւ Վլաւդիոսի հաւատարիմ թիկնապահ Նարկիսը ընդդի-մանում էր նրան մահուան ենթարկելու ամեն փորձի: Բայց և այնպէս Ագրիպպինան իւր նպատակներին հասնելու մէջ հազիւ էր անյաջողութեան պատահում: Իսկ ինչ վերաբերում է Լեպի-դային և Նարկիսին . . . նրանց էլ հերթը կհասնի:

Նա կարողացաւ յիշել միայն մի վերաւորանք, որի վրէժը չէր առել: Գալբա սենատորը յայտնի հարուստ էր և աստղա-դէտները գուշակել էին նրա համար, որ ծնուել է բախտաւոր կայսերական աստղի տակ: Սրա համար Ագրիպպինան այնպէս ակնյայտնի աշխատում էր զբաւել նրա օէրը, որ նրա մայրը՝ Լիւիա Ռաւլլինան մի անգամ աստակ տուեց Ագրիպպինային: Եթէ Գալբային և նրա կողիտ մօրը զգալ չէր տուի իւր վրէժի ամբողջ զօրութիւնը, այդ միայն նրա համար էր, որ նրանք չա-փազանց աննշան էին այսուհետեւ նրա ուշադրութեանն արժանի լինելու համար: Նա չափազանց հպարտ էր այդպիսի չնչին մարդ-կանցից վրէժ լուծելու համար: Արծիւը, մտածում էր նա, ամե-նեւ չի հոգում խուրդի մրցակցութեան մասին:

Սակայն բաւական է: Նրա մտքերը դառնում էին չափա-զանց ակէկոծ: Նա պարտական էր գնալ դէպի նպատակ քայլ

* Toga praetexta, ծիրանի եզրերնէր ծապալինով պատած մախ ուսի վրայ մղելու վերնագրեւոս որ յատկացուած էր պետական բարձր պաշտօնեանե-րին, կոնսուլներին, պրետորներին, եղիշներին, քրմերին և այլոց, նոյն-պէս և բարձրագն ռդաներին դեռ չափանաս չդարձած:

** Bulla aurea, մեղալիոնի նման մի քան, որ հին ետրուսական սո-վորութեան համեմատ կրում էին վզին որպէս նախապահպանողական հմայք մոգական կախարդութեան դիմ:

առ քայլ՝ բայց ո՞վ կհամարձակի ասել, որ նրա դորժը չի պսակու-
աւի յաջողութեամբ: Ասոջ խելքն ու ցանկութիւնն ընդունակ են
յաղթելու ամբողջ աշխարհին: «Այո՛, ներոն, իմ՝ ներոն,
այսուամենայնիւ դու կայսր կլինիս: Դու աշխարհ կկառավարես,
իսկ ես ինչպէս առաջ ղեկավարում էի քեզ, այնպէս էլ կղեկա-
վարեմ ընդ միշտ: Բո թոյլ ընաւորութիւնը դանւում է աղ-
գեցութեանս տակ և ես, որ ադամանդի պէս կարծր սիրտ
ունիմ, կլինիմ աշխարհի կայսերուհի: Նեմեզիդան, եթէ ընդ-
հանրապէս գոյութիւն ունի՝ Նեմեզիդան, պէտք է սակաւ ինչ
համբերէ»:

Աերջին խօսքերն ասաց ցածր ձայնով կարծես ինքն իւր
համար, սակայն այդ բոպէին նրա մտածողութիւնն ընդհատուեց:

ԳԼՈՒԽ Բ.

Ա.ԳՐԻՊՊԻՆԱ. ԵՒ ՆԵՐՈՆ

Occidat dum imperet.*

Tac. Ann. XIV, 9.

Միջանցքից ձայն եկաւ, վարագոյրը յետ քաշեցին և սեն-
եակ մտաւ մի ըստ երևոյթին տառն և վեց ամեայ պատանի, որ
համարեա արդէն լրացրել էր տառն և եօթը տարին:

Նա գտնւում էր իւր գեռատի, գեղեցիկ և լիակատար
ծաղկած հասակում: Երեսին գրոշմուած էր իւր նախնիքների
Գամետեան տոհմի, աղնուականութիւնը, գէմքի վրայ գեռես
հեռքն անգամ չէր երևում այն վայրենութեան, որ վերջին տա-
րիներն եկաւ նրա վրայ անտահման ետադրութիւնից, որ սաստ-
կանում էր իւր միջակութեան անորոշ գիտակցութիւնից: Բո-
լորովին լերկ էր, նախնիքների յայտնի պղնձեայ մօրուքի նշան-
ներն անգամ գեռ չէին երևում, եթէ որ ապագայում դրա հնա-
րաւորութիւնը չլիայէր մազերի մի փոքր կարմրաւուն գոյնը,
որից այնպէս հիանում էին հին ժամանակ և որ արեւի ճառա-
դայթների տակ ոսկէգոյն էր երևում: Նրա առաջից գէպի յետ
սանտրած մազերը ծածկում էին գլուխը բազմաթիւ կարճ և

* Թող սպաննեւ, միայն թե կայսր լինի:

փայլուն գանգուրներով, որոնք իջնում էին սպիտակ պարանոցի վրայ: Դէմքը դեռ չէր կորցրել երիտասարդութեան քնքոյշ վարդանման գոյնը, թէև հէնց նրա փափկութիւնն ապացոյց էր փարթամ կեանքի: Աչքերը բաց գորշագոյն էին և արտայայտութիւնը զուրկ չէր փոքր ինչ տնդանդաւորութիւնից՝ թէև կարճատեսութեան պատճառով յօնքերը յաճախ թւում էին կիտուած: Միջահատակ էր և աչքի էր ընկնում այն գեղեցիկ համաչափութիւնով, որ ստիպում էր շողոքորթներին համեմատել նրան երգերի երիտասարդ աստուծոյ հետ:

— Ներոն, բացահայնեց արքայական մայրը, կարծում էի՝ որ տակաւին խնջոյքում ես գտնվում: Եթէ կայսրը զարթի՝ կարող է նկատել բացահայտութիւնդ:

— Դրանից չպէտք է վախենալ, ծիծաղելով պատասխանեց Ներոնը: Երբ խնջոյքից հեռացայ, կայսրն արդէն ամբողջ ուժով խռկում էր իւր գահաւորակի վրայ, իսկ հիւրերը վայելչութիւնից ստիպուած ճիգ էին թափում ճնշել իրանց նշանաւոր յօրանջումները: Այդ անբախտները կմնան այնտեղ մինչև կէս գիշեր կամ աւելի ուշ, մինչև որ Նարկիսը չազատէ նրանց բոլորովին հարբած կէս-աստուածութիւնը ղիտելու խրատական տեսարանից:

— Սո՛ւտ, խտուրթեամբ ասաց Ագրիպպինան, երեսայական թեթեամբութիւնդ անտեղի է և անժամանակ: Ի՛նչ ծաղրում ես՝ ծաղրիւր, բայց ոչ կայսերական իշխանութեան մեծութեանը երբէք, նոյն իսկ մասնաւոր խօսակցութեան մէջ և ինձ հետ խօսելիս: Միտքդ պահիր, որ պալատի պատերն ականջ ունին, Ոկտաւիան էլ այնտեղ մնաց:

— Այո՛:

— Անխոհեմութիւն է, ասաց մայրը, գիտես թէ ինչքան ջանք եմ գործ գրել, որ խանգարեմ նրա յաճախակի տեսակցութիւնը հօր հետ առանց մեր ներկայութեան: Ալաւդիոսն երբեմն քնով արագ սիւսթում է հարբեցութիւնից և յայտնի չափից յետոյ, կարող է այնպէս խելացի խօսել ինչպէս միշտ: Բրիտանիկոսը նոյնպէս խնջոյքումն էր:

— Բրիտանիկոսը, հարցրեց Ներոնը, իհարկէ, ո՛չ: Զէ՛ որ, մայրիկ, բաւական հոգացիր նրան իր ընկած տեղում պահելու համար: Համաձայն հին սովորութեան, որ շատ ժամանակ չէ, ինչ վերանորոգել է կայսրը, տեսար, որ նա խնջոյքում նստել էր սեղանի վերջը, հօրն ետևում: Սակայն երեսաներին իրանց դատաւարակների հետ միասին արդէն վաղուց արձակել են և որչափ ինձ յայտնի է, Բրիտանիկոսին ուղարկել են քնելու:

— Իսկ ես ո՛ւմ համար եմ ձեռք առնում այդ նախա-

դժուշութիւնները, հարցրեց կայսերուհին, չէ՞ որ նրա համար, որ կարողանաս ծիրանի կրել և բարձրանալ աշխարհի վրայ որպէս Imperator Romanus. «Ինձ համար» մտածեց Ներոնը, «Բայց նոյնպէս և քեզ համար»։ Սակայն ոչինչ չառաց և սրովհետեւ դեռևս մօրը նուրբ դիտողութիւնից իւր մաքերը ծածկելու արուեստին չէր տիրացել, ուստի և ժպիտը պահելու համար խոնարհեց և համբուրէց նրա այտը՝ յորջորջելով «Մայրերից ամենալաւը» փաղաքշահան խօսքերը։

—«Մայրերից ամենալաւը, այո՛, բայց այդ երկարատեւ կլինի, ասաց Ագրիպպինան։ Երբ ես քեզ դահ բարձրացնեմ . . .

Նա չվերջացրեց։ Երբէք չէր համարձակում յայտնել որդուն այն սարսափելի դուշախութիւնը, որ արել էին աստղագէտները նրա համար—«նա կայսր կլինի և կոպաննէ իւր մօրը»։ Ներոնը մտածել անգամ չէր կարող, որ մայրը դրան պատասխանել էր—«Թող սպաննէ, միայն թէ կայսր լինի»։

—Optima mater այժմ և միշտ, պատասխանեց Ներոնը, բայց ես բարկացած եմ Բրիտանիկոսի վրայ, չա՛տ բարկացած և ոտքը գետին խփեց։

—Ինչո՞ւ համար, նա բաւական անվնաս տղայ է։ Կարծում էի թէ նա գանձում է բոլորովին իշխանութեանդ տակ։ Ըստ երևոյթին դուք շատ լաւ բարեկամ էք և ես տեսայ թէ ինչպէս միատնի նստել էիք և ըստ ամենայնի ընկերաբար խօսել էիք սովորեցնում ձեր կաշաղակներին։ Բացի դրանից, թէև Բրիտանիկոսն ինձ ատում է, բայց համարեա դրաւեցի նրա սիրտը մի երկու ըտպէ, խոստանալով ընծայել նրան ահա այս իմ խօսող կեռնեխը, որ այդպէս հետաքրքրութեամբ նայում է մեզ վրայ իւր վանդակից։ 3

—Նրան ինձ ընծայիր, մայրիկ, Այդպէս խօսող կեռնեխը չափազանց հաղուադիւտ բան է աշխարհում և իւր կշռից տասն անգամ աւելի ոսկի արժէ։

—Ոչ, Ներոն, թող Բրիտանիկոսն ստանայ, Հաճելի է ինձ տեսնել թէ ինչպէս նա զբաղւում է այդպիսի չնչին բաներով։ Ես քեզ համար ուրիշ բան աչքի առաջ ունիմ։ Սակայն քեզ ինչո՞վ է վիրաւորել սղորմելի տղան։

—Հանգիպեցի նրան Գելոտիոսի տանը, ասաց Ներոնը և ի՞նչ ես կարծում, թէ կհամարձակուէր անուանել—ինձ՝ նուիրական որդեգրութեամբ, որդուս՝ հետեւապէս և իւր մեծ եղբօրը։

—Օրինակ ի՞նչ։

—Ես բոլորովին քաղաքավարի ասացի—բարև, Բրիտանիկոս, իսկ նա միանգամայն յանդգնութեամբ պատասխանեց, բարև, Անկնորար (պղնձամօրուք)։ Հէ՛նց այսպէս Ահնորարը,

Ատուժ եմ այդ անունը. Աստուածային Օգոստոսին ես աւելի մօտ ազգական եմ, քան թէ նա: 4 Ի՞նչ էր կամենում արգեօք ասել զբանով:

Ագրիպպինան քմծիծաղ տուեց:

—Ողորմելի, անվնաս տղայ, ասաց նա: Այդ պարզապէս նշանակում է, որ նրա սրամտութիւնը նոյնչափ խղճալի է, որչափ միշտ եղել է հօրը սրամտութիւնը: Անշուշտ քեզ չի սիրում և բաւական հիմք ունի. սակայն զբանով ուզզակի ոչինչ չի կամեցել ասել:

—Երկմտում եմ, պատասխանեց պատանին. կասկածում եմ, որ նրան ինձ վերաւորելու տրամադրել են Նարկիսը կամ Պուգիոսը կամ ասպետ Բուլիոս Դենոսը և կամ ընդհանրապէս նրան շրջապատողներէց մէկը:

—Է՛ր, մտածելով ասաց Ագրիպպինան: Նարկիսը մեզ համար շատ վտանգաւոր թշնամի է: Նա սատակի հպարտանում է իւր փղոսկրեայ ձեռնափայտով և պրետորական նշաններով: Բայց անվերաւորելի չէ: Սայօրը շատ դժգոհ է Փուկէ՛նի լիճը չորացնելու համար ջրանցքի անյաջողութիւնից և կարող է պատահել, որ ինձ յաջողուի զրգել Դամեաիոս Աֆերին կամ այլ որեւիցէ մէկին ամբաստանելու նրան գումարներ գաղելու մէջ: Արդարեւ ի՞նչպէս կարող էր անտեսել չորս հարիւր միլիոն սեռտերց: * Նա սատակի տանջւում է ոտնացաւով և ես կհամոզեմ նրան, որ անհրաժեշտ է դնալ Վամպանիա՝ իւր առողջութիւնը վերականգնելու համար: Էէնց որ նա մեկուսիանայ . . . : Սակայն, Ներոն, ես սպասում եմ Պալլանտին, որի հետ երկար խորհրդակցելու եմ մի կարեւոր գործի համար: Աւերադարձի՛ր, տղաս, խնջոյքի դահլիճն և միշտ ուշադիր եղիւր թէ շուրջդ ի՞նչ է կատարւում:

—Աերթամ, ասաց Ներոնը, բայց, մայրի՛կ, երբեմն ցանկանում եմ, որ այս ամենը մի որեւիցէ կերպով քանդուէր: Ափսոսում եմ, որ ինձ ստիպեցին ամուսնանալ Ոկտաւիայի հետ: Նա երբէք ինձ գուրեհան չէ լինելու: Ես կցանկանայի . . . : Լռեց և ամբողջապէս կարմրեց. որովհետեւ մօրն արծիւային հայեացքն ուղղուած էր իւր վրայ և մաղ մնաց բաց անէր իւր անահնկալ և ջերմ սիրոյ գաղտնիքը դէպի Ակտէն, իւր կնոջ գեղեցիկ ազատագրուհին:

* Sestertius-նանք ընթացիկ արծաթ դրամ եր Հռոմում, հաւասար մօտաւորապէս կինգ կոպեկի ($1/4$ դենարի): Հարկուր եւ արքերեւ յ sestertium կամ sestertia խօսքերից, որոնք նշանակում են 1000 սեռտերց: 400 միլիոն սեռտերցը—20 միլիոն բուրդի սակի փողով:

—Ե՛, կասկածանքով ասաց Ագրիպպինան, թէև ո՛չ առանց չարախնդացութեան, տեսնելով որդու շփոթութիւնն իւր հրամայական հայեացքից-չարունակի՛ր:

—Ոչինչ չէի կամենում ասել, ասաց նա շփոթուած և շառագունած, սակայն երբեմն մէջս ցանկութիւն է զարթնում որ ամենեին կայսր չդառնամ: Յուլիոսը սպանուեց, Օգոստոսը, ինչպէս ասում են, թունաւորուեց, Տիրեքիոսը հեղձամահ եղաւ և Պայլոս քեռին վէրք ստացաւ: Այդ կեանքը, ակներեւ է, որ շատ էլ բախտաւոր չէ և դաշոյնը շատ յաճախ է մխուժ ծիրանու մէջ:

—Ողորմելի՛, երկչոտ տղայ, ասաց Ագրիպպինան: Ձեմ զարմանում, որ կարմրում ես: Միթէ քե՛չ բան է աշխարհի տէր լինելը: Միթէ մոռացա՞ր, որ Գերմանիկոսի թոռն ես և Կեսար-ների ու Դոմեանիանների արիւն է հոսում երակներիդ մէջ: Ուրիշը կարող է կարծել, որ դու էլ մի այնպիսի սովորական տղայ ես, ինչպէս Բրիտանիկոսը: Ամօ՛թ քեզ:

—Ա՛յ, լա՛ւ մայրիկ, ասաց նա: Դու ամեն ժամանակ քո գիտցածի պէս ես վարւում ամենքի հետ: Պալլանտը սպասում է ընդունարանում, ես պէտք է գնամ:

Նա համբուրեց մօրն և հեռացաւ: Սրանից յետոյ ծառան իմաց տուեց, որ Պալլանտը սպասում է կայսերուհու ամենաողորմած ընդունելութեան:

Թարգմանեց Մխիթար վարդապետ

(Շարունակելի)



ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

Անցեալ դարի առաջին կիսում պատմութեան փիլիսոփայութիւնը պարզորոշ և հաստատ ձևով չեշտեց, որ իւրաքանչիւր ազգի քաղաքակրթութիւնն աճում և զարգանում է, ինչպէս մի բոյս կամ մի կենդանի՝ որոշ օրէնքներով: Ազգերի բարոյական, մտաւոր և տնտեսական